## ՓԱՌՔ ԱՆՄԱՀՆԵՐԻՆ

Փառք անմահներին, նրանց վեհ գործին,
Փառք նրանց սիրոյն, անվեհեր կամքին,
Նրանք զոհուեցին, անմահ մնացին,
Հայ ժողովուրդին պատիւ բերեցին:

Փառք նրանց կրած տանջալի կեանքին,
Փառք նրանց ձեռք բերած անմահ արդիւնքին,
Դարեր շարունակ նրանք կը յիշուեն.
Արժանի կ'ըլնեն երկնային փառքին:

Փառք Հայ ժողովրդի կրած տանջանքին,
Փառք նրա թափուած կարմիր արիւնին,
Փառք նրանց հոգւոյն, ամբասիր գործին,
Որ պատիւ բերին Հայ ժողովուրդին:

Խունկ ու պատարագ նրանց շիրիմին,
Կատարեալ հանգիստ նրանց անձինին,
Թող Տէրը նրանց լոյսով պսակէ,
Հանդերձեալ կեանքին արժանի անէ:

ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՑՈՎԱԿԻՄԵԱՆ

Ը. 18)։ 3) Նմանապէս, ըստ արժանեաց հատուցմանց դրութեան մէջ, պինդ բռնելով Քրիստոսի խոստումներուն վրայ հաստատուած գլխաւոր հիմը, սովորական է կարծել թէ հարկ է շղրկել բանական և ազատ գործողին գործերը որոնք ըստ ներքին արդեանց արժանաւորութենէ։ 4) Այսուհանդերձ, ըստ Պօղոսի խօսքերուն՝ զորս յիշեցինք, միշտ տեղ կը մնայ ըսելու թէ ինչ որ ալ ըլլայ գործին արժէքը, հաստատուած վարձքը միշտ ալ արժանիքէն վեր կ'ըլլայ։

(Շարունակելի՝ 29)

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@